ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2017 թ. փետրվար-մարտ ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

1.1. 2017 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին ամփոփ տեղեկություն 4

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը 5

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների 6

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 8

2.3. Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը 8

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 10

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ 12

4.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի 12

4.2. Մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի 12

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 15

5.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 15

6. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 16

7. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 18

7.1. Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների 18

8. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվում է արտաքին ընթացիկ գնահատում, որը հնարավորություն է տալիս արձանագրելու այդ հաստատությունների ավագ դասարաններում սովորողների առաջադիմությունը: 2017 թվականի փետրվարի 13-ից մարտի 24-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 117 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գտնվող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտներն են. ընդհանուր հաշվով՝ 50 ավագ, 60 միջնակարգ դպրոցների և 7 վարժարանների 3035 աշակերտ:

Նպատակը

2017 թվականի փետրվար-մարտ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակը 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումն է:

Առարկաների ընտրությունը

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրելու երկու առարկա: Այդ ընտրությունը կատարվել է ստորև ներկայացված երեք տարբերակներից մեկով.

1. պարտադիր առարկաներից մեկը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) և մեկ բնագիտական առարկա (ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն),
2. պարտադիր առարկաներից մեկը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) և մեկ օտար լեզու (ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն),
3. պարտադիր առարկաներից երկուսը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն):

Արտաքին ընթացիկ գնահատում անցկացնելու համար կազմվել են 11-րդ դասարանի ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան թեստեր՝ սեպտեմբերից հունվար ամիսներին աշակերտների ուսումնասիրած թեմաների շրջանակներում:

Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 45 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 4 տարբերակ, իսկ հայոց լեզվից՝ 8 տարբերակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մասնագետների կողմից, արդյունքները անցկացվել են ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները դասամատյաններում գրանցելու համար տրվել են համապատասխան դպրոցներին:

Վերլուծության իրականացումը

Արտաքին և ներքին գնահատման, ինչպես նաև բնույթով և սանդղակավորմամբ տարբեր բոլոր գնահատման համակարգերի արդյունքների համեմատությունն իրականացվել է այդ նպատակի համար նախատեսված ծրագրային մեթոդներով (Z-scale, IRT): Վերլուծությունն ամբողջությամբ կատարվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով: Արտաքին ընթացիկ գնահատականներից բացի, ստեղծվել է նաև ներքին գնահատականների տվյալների բազա՝ աշակերտների 11-րդ դասարանի կիսամյակային գնահատականների հիման վրա:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. 2017 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին ամփոփ տեղեկություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների մասնակցությունը 2017 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 1

Առարկան	Հայտագրված աշակերտների թիվը	Մասնակցած աշակերտների		Չմասնակցած աշակերտների		Անբավարար գնահատական ստացած աշակերտների	
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու	2383	2248	94.3	135	5.7	379	16.9
Հանրահաշիվ	875	833	95.2	42	4.8	115	13.8
Հայոց պատմություն	629	604	96.0	25	4.0	110	18.2
Ֆիզիկա	169	152	89.9	17	10.1	26	17.1
Քիմիա	81	78	96.3	3	3.7	7	8.97
Կենսաբանություն	293	278	94.9	15	5.1	44	15.8
Աշխարհագրություն	205	196	95.6	9	4.4	53	27.04
Անգլերեն	770	721	93.6	49	6.4	61	8.5
Ռուսաց լեզու	611	575	94.1	36	5.9	108	18.8
Ֆրանսերեն	32	30	93.8	2	6.3	2	6.67
Գերմաներեն	18	15	88.9	2	11.1	6	40.0

Աղյուսակ 1-ում տեսնում ենք, որ աշակերտները պարտադիր առարկաներից (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) ընտրություն կատարելիս նախապատվությունը տվել են «Հայոց լեզու» առարկային (74.1 %), բնագիտական առարկաներից՝ «Կենսաբանություն» առարկային, «Քիմիա» առարկան ընտրել են քիչ թվով աշակերտներ: Օտար լեզուներից գերակշռում է «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներն ընտրողների թիվը, «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաները քիչ ուսումնասիրվելու պատճառով՝ ընտրվել են քիչ թվով աշակերտների կողմից:

Հաշվի առնելով այն, որ գնահատումն անցկացվել է թեստերի 4 տարբերակներով, «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաների մասնակիցների թիվը բավարար չի եղել հետագա վերլուծության մեջ ներառելու համար:

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Արտաքին ընթացիկ գնահատման թեստերի կառուցվածքը բոլոր առարկաների համար ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

Առարկան	Առաջադրանքների քանակը			Առավելագույն միավորը
	ընտրովի	կարճ	ընդարձակ	
Հայոց լեզու	12	3	-	20
Հանրահաշիվ	7	5	2	16
Հայոց պատմություն	12	4	1	20
Ֆիզիկա	14	4	2	20
Քիմիա	16	3	1	20
Կենսաբանություն	15	4	1	20
Աշխարհագրություն	15	4	1	20
Օտար լեզու (անգլերեն, ռուսաց լեզու, ֆրանսերեն, գերմաներեն)	12	5	1	20

Հանրահաշվի թեստերի առավելագույն միավորը եղել է 16, մյուս առարկաներինը՝ 20: Ընտրովի պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0-3 միավորներով:

Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների:

Աղյուսակ 3

Քննությունների արդյունքների գնահատման սանդղակներ			
Նախնական միավորը (0-16)	**Գնահատականը (1-10)**	**Նախնական միավորը (0-20)**	**Գնահատականը (1-10)**
0-1	1	0-1	1
2	2	2-3	2
3	3	4-5	3
4	4	6-7	4
5-6	5	8-10	5
7-8	6	11-13	6
9-11	7	14-15	7
12-13	8	16-17	8
14-15	9	18-19	9
16	10	20	10

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են հանրակրթական առարկաների միավորների բաշխման հիստոգրամները:





Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը հիմնականում համաչափ են: «Անգլերեն» և «Քիմիա» առարկաների միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները, «Աշխարհագրություն» առարկայինը՝ դեպի ցածր միավորները:

Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 4

	Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[1]	Ստանդարտ շեղումը (ցրվածու-թյունը)[2]	Հուսալի-ությունը[3]
Պարտադիր	Հայոց լեզու	2248	4.62	0.028	1.344	0.80
	Հանրահաշիվ	833	5.07	0.056	1.604	0.76
	Հայոց պատմություն	603	4.91	0.073	1.782	0.80
Բնագիտական առարկաներ	Ֆիզիկա	152	5.30	0.152	1.876	0.82
	Քիմիա	78	6.97	0.245	2.168	0.86
	Կենսաբանություն	278	5.78	0.134	2.237	0.87
	Աշխարհագրություն	196	4.61	0.116	1.625	0.76
Օտար լեզուներ	Անգլերեն	721	6.62	0.079	2.133	0.83
	Ռուսաց լեզու	575	5.01	0.070	1.674	0.75
	Ֆրանսերեն*	30	5.73	0.214	1.172	0.69
	Գերմաներեն*	15	5.20	0.691	2.678	0.91

**-ով նշված են վերլուծության մեջ չներառված առարկաները*

[1]Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:
[2]10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:
[3] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Ամենացածր միջին միավորները գրանցվել են «Հայոց լեզու» և «Աշխարհագրություն» առարկաներից, իսկ ամենաբարձր միջին միավորները՝ «Քիմիա» և «Անգլերեն» առարկաներից: Ինչպես արդեն նշվել է նախորդ վերլուծության մեջ, աշակերտները ավելի մոտիվացված են «Անգլերեն» առարկան ուսումնասիրելու: Հաշվի առնելով «Քիմիա» առարկան ընտրողների քիչ քանակը՝ հարկ է նշել, որ այս առարկան ընտրել են միայն այն խորությամբ ուսումնասիրող աշակերտները, ինչը չի կարելի ասել «Աշխարհագրություն» առարկայի մասին:

Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են, հուսալիությունները՝ ընդունելի:

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի (1-3, 4-5, 6-8 և 9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 1



Դիագրամում տեսնում ենք, որ «Քիմիա» և «Անգլերեն» առարկաներն աչքի են ընկնում «գերազանց» (9 և 10) գնահատականներ ստացած աշակերտների ամենամեծ, համապատասխանաբար՝ 33.3 և 22.2 տոկոսներով, և «անբավարար» (1-3) գնահատականների ամենափոքր, համապատասխանաբար՝ 8.97 և 8.5 տոկոսներով:

2.3. Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը

Արտաքին և ներքին գնահատումների միավորները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց

համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը. 1-3 գնահատականներ գրեթե չկան, իսկ 9-10 գնահատականների խմբերը նշանակալիորեն մեծ են:

Աղյուսակ 5

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	4.62	0.028	1.344
	Ներքին	6.40	0.047	2.231
Հանրահաշիվ	Արտաքին	5.07	0.056	1.604
	Ներքին	6.67	0.077	2.236
Հայոց պատմություն	Արտաքին	4.91	0.073	1.782
	Ներքին	6.43	0.092	2.255
Ֆիզիկա	Արտաքին	5.30	0.152	1.876
	Ներքին	7.20	0.157	1.941
Քիմիա	Արտաքին	6.97	0.245	2.168
	Ներքին	7.50	0.217	1.919
Կենսաբանություն	Արտաքին	5.78	0.134	2.237
	Ներքին	6.78	0.112	1.864
Աշխարհագրություն	Արտաքին	4.61	0.116	1.625
	Ներքին	6.51	0.147	2.054
Անգլերեն	Արտաքին	6.62	0.079	2.133
	Ներքին	7.18	0.074	1.993
Ռուսաց լեզու	Արտաքին	5.01	0.070	1.674
	Ներքին	6.79	0.082	1.974

Աղյուսակում տեսնում ենք, որ ներքին գնահատման միջին միավորները 6.4-ից (հայոց լեզու) 7.5 (քիմիա) միջակայքում են, արտաքին գնահատման միջին միավորները՝ 4.6-ից 7: Երկու գնահատումների դեպքում էլ ամենացածր միջին միավորը գրանցվել է «Հայոց լեզու» առարկայից: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Անգլերեն» և «Քիմիա» առարկաներից, հետևաբար, այս առարկաներից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները ամենափոքրն են՝ 0.5-0.6 միավոր: Ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերություններն, ըստ առարկաների, ակնառու են դիագրամ 2-ում:

Դիագրամ 2



3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների 54 %-ը աղջիկներ են, 46 %-ը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բոլոր առարկաներից վիճակագրական տվյալներ՝ ըստ սեռերի:

Աղյուսակ 6

Առարկան	Սեռը	Մասնակիցների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
		թիվը	տոկոսը		
Հայոց լեզու	աղջիկ	1319	58.7	4.92	1.378
	տղա	929	41.3	4.19	1.172
Հանրահաշիվ	աղջիկ	365	43.8	5.31	1.634
	տղա	468	56.2	4.88	1.555
Հայոց պատմություն	աղջիկ	314	52.1	5.19	1.735
	տղա	289	47.9	4.61	1.786
Ֆիզիկա	աղջիկ	56	36.8	5.54	1.705
	տղա	96	63.2	5.16	1.965
Քիմիա	աղջիկ	42	53.8	7.19	2.110
	տղա	36	46.2	6.72	2.237
Կենսաբանություն	աղջիկ	162	58.3	6.27	2.163
	տղա	116	41.7	5.09	2.167
Աշխարհագրություն	աղջիկ	95	48.5	4.85	1.682
	տղա	101	51.5	4.38	1.542
Անգլերեն	աղջիկ	438	60.7	7.00	2.023
	տղա	283	39.3	6.04	2.171
Ռուսաց լեզու	աղջիկ	279	48.5	5.48	1.728
	տղա	296	51.5	4.57	1.494

Մասնակիցների տոկոսային թվերն ըստ սեռերի ներկայացված են դիագրամ 3-ում:

Դիագրամ 3



Դիագրամում տեսնում ենք, որ տղաները հիմնական նախապատվությունը տալիս են «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներին:

Ստորև բերված դիագրամում ներկայացված է բոլոր առարկաներից աշակերտների միջին միավորների համեմատությունն ըստ սեռերի:

Դիագրամ 4



Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները բարձր են տղաների միջին միավորներից՝ հատկապես «Կենսաբանություն», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Տղաների՝ նախապատվություն տված առարկաներում (տե՛ս դիագրամ 3-ում), նրանց միջին միավորները համեմատաբար բարձր են եղել՝ գրեթե հավասարվելով աղջիկների միջին միավորներին:

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

4.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 5-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:

Դիագրամ 5



Ընդհանուր հոսքի մասնակիցների տոկոսային թիվը մեծ է, որովհետև միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է ընդհանուր հոսքի ծրագրով: Վերլուծության արդյունքնում պարզ է դառնում, որ մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում, ընտրելու հնարավորության դեպքում, աշակերտները նախապատվությունը տալիս են, նախ՝ հումանիտար հոսքին, այնուհետև բնագիտական կամ տնտեսագիտական հոսքերին: Ֆիզմաթ հոսքն ընտրում են քիչ թվով աշակերտներ:

4.2. Մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի

Աղյուսակ 7-ում ներկայացված են մասնակիցների թվերը և միջին միավորներն ըստ հոսքերի բոլոր առարկաներից: Մգեցված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Աղյուսակ 7

Հոսքը / Առարկան	Բնագիտական		Հումանիտար		Ընդհանուր		Տնտեսագիտական		Ֆիզմաթ	
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու	348	**4.72**	679	**4.78**	983	4.43	205	**4.74**	33	**5.18**
Հանրահաշիվ	242	**5.29**	49	3.83	280	4.77	202	**5.26**	60	**5.91**
Հայոց պատմություն	15	**5.10**	237	**5.39**	321	4.60	19	4.33	5	4.75
Ֆիզիկա	54	5.20	-	-	76	5.01	5	**7.20**	17	**6.29**
Քիմիա	66	**7.14**	3	6.67	9	5.89	-	-	-	-
Կենսաբանություն	96	**7.36**	7	5.29	162	4.72	12	**7.75**	1	5.00
Աշխարհագրություն	10	4.40	28	**6.11**	138	4.25	17	**5.06**	3	**5.33**
Անգլերեն	58	**7.09**	300	6.49	197	6.22	149	**7.17**	17	**6.71**
Ռուսաց լեզու	82	**5.15**	190	**5.34**	256	4.65	45	**5.42**	2	5.00

Աղյուսակ 7-ում տեսնում ենք, որ ընդհանուր հոսքի աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են ընդհանուր միջին միավորներից ցածր արդյունքներ: Հետաքրքիր է նկատել, որ բնագիտական հոսքում, բացի «Ֆիզիկա» և «Աշխարհագրություն» առարկաներից, աշակերտները գրանցել են ընդհանուր միջին միավորներից բարձր արդյունքներ: Հումանիտար հոսքում բարձր արդյունքներ գրանցվել են «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում աշակերտները, բացի «Հայոց պատմություն» առարկայից, մյուս առարկաներից ցուցաբերել են լավ արդյունքներ:

Դիագրամ 6



Ըստ հոսքերի վերլուծությունից պարզվել է, որ բնագիտական և ընդհանուր հոսքերում աշակերտների միջին միավորները պարտադիր առարկաներից նշանակալիորեն չեն տարբերվել: Հումանիտար հոսքում, ինչը և սպասելի էր, ցածր է «Հանրահաշիվ» առարկայից աշակերտների միջին միավորը (3.83), մյուս հոսքերում այս առարկայից աշակերտների միջին միավորները բարձր են մյուս առարկաների համեմատ, հատկապես ֆիզմաթ հոսքում (5.91):

Բնագիտական առարկաներից ֆիզիկան չեն ընտրել հումանիտար հոսքում, քիմիան՝ տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում: Այս առարկաներից աշակերտների ամենացածր միջին միավորները գրանցվել են ընդհանուր հոսքում:

Օտար լեզուներից միջին միավորները բարձր են տնտեսագիտական հոսքում: Այս առարկաներից նույնպես ամենացածր միջին միավորները դիտարկվել են ընդհանուր հոսքում:

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

5.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 42.7 տոկոսը ավագ դպրոցների, 51.3 տոկոսը միջնակարգ դպրոցների և 6 տոկոսը վարժարանների աշակերտներ են: Աղյուսակ 8-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Մգեցված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 8

Առարկան	Առարկայի ընդհանուր միջին միավորը	Ավագ դպրոց			Միջնակարգ դպրոց			Վարժարան		
		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	4.62	1196	**4.75**	1.27	830	4.41	1.31	222	**4.85**	1.26
Հանրահաշիվ	5.07	481	**5.29**	1.66	227	4.60	1.66	125	**5.07**	1.41
Հայոց պատմություն	4.91	307	**5.25**	1.80	273	4.45	1.58	23	**4.91**	2.04
Ֆիզիկա	5.30	65	5.08	1.92	70	4.93	1.56	17	**7.65**	1.12
Քիմիա	6.97	71	**7.15**	1.99	6	4.83	3.312	1	**7**	-
Կենսաբանություն	5.78	123	**7.28**	2.09	150	4.59	1.53	5	4.4	1.53
Աշխարհագրություն	4.61	85	**5.06**	1.85	104	4.26	1.32	7	4.29	1.70
Անգլերեն	6.62	462	**6.77**	2.07	145	5.99	2.31	114	**6.84**	2.02
Ռուսաց լեզու	5.01	365	**5.19**	1.64	184	4.61	1.71	26	**5.35**	1.41

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի վերլուծության մեջ տեսնում ենք, որ միջնակարգ դպրոցների աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից ցածր առաջադիմություն: Ավագ դպրոցների աշակերտները միայն «Ֆիզիկա» առարկայից են ցուցաբերել ընդհանուր միջին միավորից ցածր առաջադիմություն: Վարժարանների աշակերտներից քչերն են ընտրել բնագիտական առարկաներ, և հատկապես «Կենսաբանություն» ու «Աշխարհագրություն» առարկաների միջին միավորները ցածր են տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից:

6. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դիագրամ 7-ում ներկայացված է 2017 թ. արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակից հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների դիրքերը սանդղակի միջին միավորի նկատմամբ՝ պարտադիր առարկաներից: Դիագրամի յուրաքանչյուր ուղղահայաց գծի վրա գտնվում են տվյալ ուսումնական հաստատության միջին միավորները այն առարկաներից, որոնք ընտրել են այդ ուսումնական հաստատությունում. կապույտով նշված է հայոց լեզվի, կարմիրով՝ հայոց պատմության, կանաչով՝ հանրահաշվի միջին միավորները, իսկ մանուշակագույն կետագիծը սանդղակի միջին միավորն է (5.5): Քանի որ «Հայոց լեզու» առարկան գրեթե բոլոր ուսումնական հաստատություններն են ընտրել, հետևաբար, միջին միավորները դասավորված են այդ առարկայի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 7



Դիագրամում տեսնում ենք, որ 117 դպրոցներից 3-ի աշակերտները չեն ընտրել «Հայոց լեզու» առարկան (դիագրամի աջակողմյան հատվածում), մյուս առարկաներից ունեցել են սանդղակի միջին միավորից ցածր միջին միավոր: «Հանրահաշիվ» առարկան չեն ընտրել 19 դպրոցներում, իսկ «Հայոց պատմություն» առարկան՝ 38 դպրոցներում:

Աղյուսակ 9-ում ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորները, որոնց հայոց լեզվի միջին միավորը սանդղակի միջին միավորից վերև է:

Աղյուսակ 9

Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը		
	Հայոց լեզու	Հայոց պատմություն	Հանրահաշիվ
Ստեփանավանի վարժարան	**5.63**	-	5.11
Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց	**5.69**	8.48	5.07
Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց	**5.96**	5.22	6.68
Կողբի թիվ 2 միջն. դպրոց	**6.02**	-	4.53
Թաիրովի միջն. դպրոց	**6.12**	-	4.14
Ալավերդու թիվ 8 ավագ դպրոց	**6.26**	-	9.41
Լեռնանիստի միջն. դպրոց	**6.50**	7.1	6.12
Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	**6.73**	5.7	6.47

«Հանրահաշիվ» առարկայից 16 դպրոցների աշակերտների միջին միավորները ցածր են եղել դրական միավորի շեմից, իսկ 31 դպրոցների աշակերտների միջին միավորները բարձր են եղել սանդղակի միջին միավորից: Աղյուսակ 10-ում ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորները, որոնց հանրահաշվի միջին միավորը սանդղակի միջին միավորից վերև է, և մասնակից աշակերտերի թիվը եղել է 10-ից ավելի:

Աղյուսակ 10

Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը		
	Հանրահաշիվ	Հայոց լեզու	Հայոց պատմություն
«Քվանտ» վարժարան	**5.61**	5.19	-
Աշտարակի ավագ դպրոց	**5.75**	5.12	4.4
Երևանի թիվ 112 ավագ դպրոց	**5.92**	5	**2.57**
ՀՊՄՀ-ի Երևանի հ/վ	**5.99**	5.36	-
Կապանի թիվ 2 ավագ դպրոց	**6.01**	4.5	-
Երևանի թիվ 118 ավագ դպրոց	**6.10**	4.63	5.19
ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	**6.39**	5.17	6.22
Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	**6.47**	6.73	5.7
Չարենցավանի ավագ դպրոց	**7.24**	4.98	**5**

7. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

7.1. Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների

Ստորև բերված դիագրամում ներկայացված են աշակերտների միջին միավորներն ըստ վարչատարածքային միավորների՝ պարտադիր առարկաներից: Վարչատարածքային միավորները դասավորված են հայոց լեզվի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 8



	Գեղարքունիք	Վայոց ձոր	Շիրակ	Արարատ	Սյունիք	Արմավիր	Լոռի	Երևան	Տավուշ	Արագածոտն	Կոտայք
Հայոց լեզու	4.11	4.3	4.35	4.42	4.49	4.72	4.75	4.78	4.83	4.86	5.17
Հայոց պատմություն	4.31	5.14	4.89	3.86	5.38	5.54	5.23	4.94	4.53	5.19	5.4
Հանրահաշիվ	3.86	5.11	5.36	4.41	4.98	4.73	5.2	5.18	4.82	5.43	6.22

Դիագրամ 8-ում տեսնում ենք, որ Գեղարքունիքի և Արարատի մարզերում երեք պարտադիր առարկաներից էլ գրանցվել են ցածր արդյունքներ: Արդյունքները, հատկապես հանրահաշվից, բարձր են եղել Կոտայքի և Արագածոտնի մարզերում:

8. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 117 հանրակրթական ուսումնական հաստատություններից 26-ը եղել են խոշոր քաղաքների, 17-ը՝ միջին քաղաքների, 22-ը՝ փոքր քաղաքների, 41-ը՝ գյուղերի, 5-ը սահմանամերձ և հեռավոր գյուղերի և 6-ը բարձրլեռնային գյուղերի ուսումնական հաստատություններ:

Դիագրամ 9



Ըստ բնակավայրերի տիպերի վերլուծությունից պարզվել է, որ «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» պարտադիր առարկաներից գյուղերի և բարձրլեռնային գյուղերի աշակերտների միջին միավորները նշանանակալիորեն ցածր են մյուս տիպերի բնակավայրերի աշակերտների միջին միավորներից, այս առարկաներից լավագույն արդյունք են ցուցաբերել միջին քաղաքների ու սահմանամերձ և հեռավոր գյուղերի աշակերտները: «Հանրահաշիվ» առարկայից նույնպես լավագույն արդյունք են ցուցաբերել միջին քաղաքների աշակերտները, և նշանանակալիորեն ցածր արդյունք են ցուցաբերել բարձրլեռնային գյուղերի աշակերտները:

Այսպիսով, բոլոր առարկաներից բարձրլեռնային գյուղերի աշակերտները ցուցաբերել են նշանակալիորեն ցածր արդյունքներ: Լավագույն արդյունք են ցուցաբերել միջին քաղաքների աշակերտները:

Եզրակացություն

2017 թվականի փետրվարի 13-ից մարտի 24-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 117 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Գնահատման նպատակը եղել է 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումը:

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել պարտադիր առարկաներից, բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ընտրել երկու առարկա: Ընտրության հնարավոր տարբերակները մանրամասն ներկայացված են ներածության մեջ: Աշակերտների մեծ մասը՝ 74.1 տոկոսը, պարտադիր առարկաներից նախապատվությունը տվել է «Հայոց լեզու» առարկային, բնագիտական առարկաներից՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լեզուներից գերակշռում են «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներն ընտրողների թիվը: Ամենացածր միջին միավորները գրանցվել են «Հայոց լեզու» և «Աշխարհագրություն» առարկաներից, իսկ ամենաբարձր միջին միավորները՝ «Քիմիա» և «Անգլերեն» առարկաներից: Ինչպես արդեն նշվել է նախորդ վերլուծության մեջ, աշակերտները ավելի մոտիվացված են «Անգլերեն» առարկան ուսումնասիրելու: Հաշվի առնելով «Քիմիա» առարկան ընտրածների քիչ քանակը՝ հարկ է նշել, որ այս առարկան ընտրել են միայն այն խորությամբ ուսումնասիրող աշակերտները, ինչը չի կարելի ասել «Աշխարհագրություն» առարկայի համար:

- **Գնահատականների խմբերի համեմատությունն ըստ առարկաների**

Գնահատականների խմբերի համեմատության մեջ տեսնում ենք, որ «Քիմիա» և «Անգլերեն» առարկաները աչքի են ընկնում «գերազանց» գնահատականներ ստացած աշակերտների ամենամեծ տոկոսներով, և «անբավարար» գնահատականների ամենափոքր:

- **Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը**

Երկու գնահատումների դեպքում էլ ամենացածր միջին միավորը գրանցվել է «Հայոց լեզու» առարկայից: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Անգլերեն» և «Քիմիա» առարկաներից, հետևաբար, այս առարկաներից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները ամենափոքրն են՝ 0.5-0.6 միավոր:

- **Վերլուծություն ըստ սեռերի**

Ըստ սեռերի համեմատության մեջ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները բարձր են տղաների միջին միավորներից: Տղաների՝ նախապատվություն տված առարկաներում, նրանց միջին միավորները համեմատաբար բարձր են եղել՝ գրեթե հավասարվելով աղջիկների միջին միավորներին:

- **Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի**

Ընդհանուր հոսքի աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են ընդհանուր միջին միավորներից ցածր արդյունքներ: Հետաքրքիր է նկատել, որ բնագիտական հոսքում, բացի «Ֆիզիկա» և «Աշխարհագրություն» առարկաներից, աշակերտները գրանցել են ընդհանուր միջին միավորներից բարձր արդյունքներ: Հումանիտար հոսքում բարձր արդյունքներ գրանցվել են «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում աշակերտները, բացի «Հայոց պատմություն» առարկայից, մյուս առարկաներից ցուցաբերել են լավ արդյունքներ:

- **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի վերլուծության մեջ տեսնում ենք, որ միջնակարգ դպրոցների աշակերտները բոլոր առարկանեից ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից ցածր առաջադիմություն: Ավագ դպրոցների աշակերտները միայն «Ֆիզիկա» առարկայից են ցուցաբերել ընդհանուր միջին միավորից ցածր առաջադիմություն: Վարժարանների աշակերտներից քչերն են ընտրել բնագիտական առարկաներ, և հատկապես «Կենսաբանություն» ու «Աշխարհագրություն» առարկաների միջին միավորները ցածր են տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների**

Գեղարքունիքի և Արարատի մարզերում երեք պարտադիր առարկաներից էլ գրանցվել են ցածր արդյունքներ: Արդյունքները, հատկապես հանրահաշվից, բարձր են եղել Կոտայքի և Արագածոտնի մարզերում:

- **Աշակերտների պատրաստվածությունը ըստ բնակավայրերի տիպերի**

Բոլոր առարկաներից բարձրլեռնային գյուղերի աշակերտները ցուցաբերել են նշանակալիորեն ցածր արդյունքներ: Լավագույն արդյունք են ցուցաբերել միջին քաղաքների աշակերտները: